



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Յոյս իմեա դու տէր քաւիչ յանցանաց իմոց.

մի անտես առնէր զբոլոր խումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստուած:

ԱՊՈԹՔ

Ով Հայր, դուն որ գթառատ ես, եւ ամէն տեսակի միփթարութիւն պարգեւելով մեզ կը միփթարես մեր բոլոր նեղութիւններուն մէջ: Այս պահուն լսէ՛ քու ծառաներուդ պաղատաւից խնդրանքը, եւ ընդունէ մեր աղաչանքը: Դուն՝ որ բարերար ես, ջնջէ մեր յանցանքներուն արժանի ահաւոր պատիժը: Ներողամիտ գտնուէ եւ լսէ մեզ, քանի որ եւ ներէ մեր մեղքերը: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գէտ աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնէ եւ նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՈՂԲ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՆԿՈՒՄԻՆ ՎՐԱՅ

Իսկ արդ, դուն մերժեցիր, եւ բարկութեամբ անարգեցիր օծեալդ:
 Բեկանեցիր ծառայիդ հետ կնքած ուխտդ,
 գետինը, կեղտի մէջ նետեցիր անոր թագը:
 Խորտակեցիր անոր բոլոր պարիսպները, անոր ամրոցները
 աւերեցիր:
 Անցորդները կողոպտեցին զայն,
 եւ անիկա իր դրացիներուն նախատինքին առարկան դարձաւ:
 Անոր հակառակորդները զօրացուցիր, բոլոր թշնամիները
 ուրախացուցիր:
 Անոր սուրը կոտրեցիր, պատերազմի ատեն անոր նեցուկ
 չկանգնեցար:
 Խափանեցիր անոր փառքը, անոր աթոռը գետին տապալեցիր:
 Կարնցուցիր անոր երիտասարդ տարիները, եւ ամօթով ծածկեցիր
 զայն:

ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Դեռ մինչեւ ե՞րբ երես պիտի դարձընես, Տէր,
 մինչեւ ե՞րբ բարկութիւնդ կրակի պէս պիտի բորբոքի:
 Յիշէ զիս, եւ թէ որքան կարն է կեանքը.
 միթէ զուր տե՞ղ ստեղծեցիր բոլոր մարդիկը:
 Կա՞յ մարդ մը, որ ապրի՝ առանց մահ տեսնելու,
 որ կարենայ մահուան ձեռքէն փախուստ տալ:
 Ո՞ւր են առաջուան սէրդ եւ հաւատարմութիւնդ, Տէր,
 որ երդումով խոստացար Դաւիթին:
 Յիշէ, ով Տէր, նախատինքը որ ես՝ փու ծառադ՝
 կրեցի բազմաթիւ ժողովուրդներէ.
 այն նախատինքը՝ որ փու թշնամիներէդ, Տէր,
 հասցուցին փու օծեալիդ:
 Օրհնեալ է Տէրը յաւիտեան: Ամէն ըլլայ:

ՈՂԲ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՆԿՈՒՄԻՆ ՎՐԱՅ: ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ 89:38-52

Շարունակելով 89 Սաղմոսի վերջին երկու բաժինները, առաջինը որ կը ներկայացնէ թագաւորին անկումին ողբը, իսկ վերջին բաժինը՝ ազապագրութեան խնդրանք: Ներկայացնելէ յետոյ, թէ ինչպէս Աստուած խոստում փութած էր իր ծառային՝ Դաւիթին, սուրբ իւղով օծած, անխախտ պահելու, անոր սերունդը հաստատուն պահելու, բայց զգուշացնելով, որ եթէ անոր զաւակները մոռնան Օրէնքը, անարգեն ու չպահեն պատուէրները Աստուծոյ, այն ատեն զիրենք խաբազանով պարծելու: Բայց միշտ յիշեցնելով, որ Աստուած Իր ողորմութիւնը պիտի չկորէ, հաւաքարմութեան պիտի չդաւաճանէ: Ահա կը յաջորդէ այն հատուածը, ուր կը ներկայացնէ, թէ Աստուած մերժեց եւ բարկութեամբ անարգեց օծեալը: Բեկանեց կնքած ուխտը, կեղտի մէջ նետեց անոր թագը: Խորտակելով անոր բոլոր պարիսպները, իր դրացիներուն նախաքինքի առարկայ դառնալով: Անոր հակառակորդները զօրացուց եւ թշնամիները ուրախացան: Պարերագմի ժամանակ նեցուկ չկանգնեցաւ Աստուած: Կարճցուց անոր երկրասարդի փարիները եւ ամօթով ծածկեց զայն: Այս հատուածը կարծէք ցոյց կու փայ այն հակասումը Աստուծոյ փութած կամ ըրած ուխտին եւ այն նեղութեան, դժուարութեան կամ հալածանքին, որուն մէջէն կ'անցնի մարդը, այս պարագային՝ թագաւորը, այն թագաւորը որ Աստուած Իր սուր իւղով օծեց: Երկրորդ, առաջին փողին մէջ կարդացինք "Դուն մերժեցիր" արքայապտութիւնը: Այո, յաճախ այնպէս կը թուի, թէ Աստուած մերժեց, երես դարձուց, եւ ալ կարեւորութիւն չի փար: Նախ, յստակօրէն կարդացինք նախորդ հատուածին մէջ, թէ Աստուած Իր ողորմութիւնը պիտի չկորէ, հաւաքարմութեանը պիտի չդաւաճանէ: Ուրեմն, երբեք ալ հակասում չկայ, եւ մերժում չէ, այլ դաստիարակութեան եղանակ: Երկրորդ եւ ամենա-կարեւոր երեսը այս հատուածին, որքան թագաւորի մասին է խօսքը, կամ Դաւիթի թագաւորութեան մասին, բայց փողափայլի կը կարդանք մարգարէական այն պարագամը, որ ցոյց կու փայ նախապար-կերացումը Քրիստոսի չարչարանքներուն եւ խաչելութեան: Երբ ձեռքակալութեան, դաւաժարութեան, անարգանքի, ծեծի, ու մանաւանդ՝ խաչելութեան պահուն, այնպէս կ'երեւէր որպէս մերժում, անար-գում, խորտակում, նախաքինքի առարկայ դարձած, պարերագմի պահուն նեցուկ չկանգնեցաւ Աստ-ուած: Երկրասարդ փարիները կարճցուցած:

Իսկ վերջին բաժինը, բնական աղաղակ է, ինչպէս բոլորիս մօտ կարելի է այդ մէկը փեսնել, "Մինչեւ ե՛րբ" արքայապտութիւնը: Մինչ այդ այս արքայապտութիւնը հաւաքէն պարպուած արքայա-փութիւն չէ, այլ՝ այն ցաւը որ կ'ապրի հաւաքացեալը այդ դժուարին պայմաններուն ընթացքին: Երկրորդ, կը յիշեցնէ թէ որքան կարճ է կեանքը, եւ հարց կու փայ, թէ արդեօք ինչո՞ւ սրեղծեցիր մարդը, մանաւանդ երբ մահը կայ, եւ այդ ալ անխուսափելի: Եւ այս իրավիճակին մէջ, հարց կու փայ եւ կը յիշեցնէ Աստուծոյ, թէ ո՞ր է առաջուան սերդ եւ հաւաքարմութիւնդ Տէր: Խորքին մէջ, այս հարցադրումը, մենք կը կարդանք Քրիստոսի նամակին մէջ ուղղում Եփեսոսի եկեղեցիին "Զիս առաջուածն պէս չես սիրեր": Ուրեմն, խորքին մէջ մենք ենք որ մեր սերն ու հաւաքարմութիւնը կորսնցուցեր ենք Աստուծոյ նկարմամբ եւ ոչ թէ Ինք: Եւ կը յիշեցնէ այն նախաքինքի որ կրեց նոյնինքն Աստուծոյ թշնամիներէն օծեալին դէմ: Այսինքն ինչ որ կ'ընեն Քրիստոսի է որ կ'ընեն: Հակառակ այս ծանր վիճակին, սակայն Սաղմոսը կ'աւարտի օրհնութեամբ, "Օրհնեալ է Տէրը յաւիտեան": Կը նշանակէ, հակառակ այս իրավիճակին, փա-կաւին կայ յոյսը հանդէպ այն Աստուծոյն, որ արդար ու ճշմարիտ է, հաւաքարիմ է Իր ուխտին: Այսօր ալ մեզի յիշեցում է, որ մենք ալ այս նոյն յոյսով շարունակենք բարի պարերագմը պարերագմելու, հաւաք-քը պահելու, ամբողջութեամբ Աստուծոյ վարահելու: Թող ամենաբարին Աստուած աւելցնէ մեր հաւաք-քը, յոյսն ու սերը, ամէն:

***Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ քաղմամեղիս:***